

ՀԱՅԵՐԷՆԻ ԿՐԿՆԱԻՈՐՆԵՐԸ

Երեսանի բարբառում (Քանափեռի խօսուածք)։

Հայերէնի մէջ հանդէս եկած կրկնութեանց մասին ընդարձակօրէն գրած է արդէն պ. Հ. Աճառեան «Հանդէս ամսօրեայ»-ի էջերում (1899 յուլ.—օգ.), ուսումնասիրելով յատկապէս հին և նոր գրական հայերէնի և Պօլսի բարբառի ընձեռած օրինակները։ Ոչ նուազ շահեկան պիտի լինէր, եթէ, իբրև լրացում կամ շարունակութիւն այդ մանրակրկիտ ուսումնասիրութեան, քննութեան առնուէին նաև այն կրկնաւոր ձևերը, որոնք գոյութիւն ունին միւս բարբառներում։ Ներկայ յօդուածը մի փոքրիկ փորձ է պատկերելու կրկնութեան կերտջթը Երեսանի բարբառում և յատկապէս Քանափեռի խօսուածքի մէջ. օրինակները վերցրած են Վէրք Հայաստանի»-ի (Մոսկուա 1890) բառագանձից։ Այդ կրկնութեան մեծ մասն ունի իր համապատասխան օրինակները գասական հայերէնի մէջ. կան այնպիսիներ էլ, որոնք յատուկ են սոյն բարբառին։ Համեմատութիւնը տալիս է հետևեալ պատկերը.

1) Միենոյն բառի անփոփոխ կրկնութիւն.

Դսկ. կողմանց կողմանց. ամի ամի. զունց զունց.

Երև. կիսուկ կիսուկ. ձար ձար.

2) Կրկնութիւն միենոյն բառի սկզբի բաղաձայնը փոխուելով մ-ի.

Դսկ. յարմար (յար + մար). շոզմազ (շոզ + մոզ).

Երև. հաց-մաց. հագալ-մագալ. երես-մերես. սիլա-միլա.

Փան. ա. Դասականում այս կարգի կրկնաւորներն առհասարակ կազմում են ա յօդակապով. օր. աղիւ-ա-մ-աղիւ. արհ-ա-մ-արհ (ըստ Հայկ. բառ. =ան-համարելի).

Փան. բ. Նոյն բառարանը շոզմազ բառին տալիս է հետևալ զուարճալի բայց ձախող ստուգաբանութիւնը—«իբր շոզուով բերանոյ իւրոյ մոզիչ լսելեաց»։ Այս ձևի ստուգաբանութիւնն յատուկ է բոլոր նըսնց, որոնք առանց ձայնագիտական օրէնքներին ուշ դարձնելու ճգնում են ամէն բան բացազրկ միայն իմաստի նմանութեամբ։

3) Կրկնութիւն արմատական ձայնաւորի փոփոխմամբ.

Դսկ. սար-սուռ. սպառ-սպուռ. կեր-ա-կուր.

Երև. դար-դուս. ձեն-ձուն. շեմուշում փալաս-փուլուս. աղխս-ուղխս.

Փան. մ. Գասական կեր-ա-կուր-ը թերևս աւելի ճիշտ լինի բացազրկ կեր և կուր նոյնիմաստ բառերի համազրուութեամբ. հայերէն կուր-ը համեմատելի է յուն. βρω-μα-ի և βորά-ի հետ, որոնք իմաստով էլ նոյնն են. հմ. Հիւրըմ. Armen. Gram. էջ՝ 459—60.

4) Կրկնութիւն արտասանութեամբ շատ մօտ այլիմաստ բառերի համազրութեամբ.

Դսկ. —

Երև. աման-չաման. ասփալ-քասփալ.

5) կրկնութիւն բառակերջի բաղաձայնի կամ բաղաձայնների փոփոխմամբ.

Դսկ. դան-դադ-իմ. դան-դաչ-եմ. կադ-կանձ-իւն. sr-sոււջ.

Երև. Թոն-թոր-ամ. բամ-բաչ-եմ (կամ՝ փամ-փաչ-եմ), փր-փնջ-ամ (= դուարձանալ).

6) կրկնութիւն բառասկզբի բաղաձայնի փոփոխմամբ.

Դսկ.—

Երև. դլ-վլ-ալ (դատարկ ստամոքսի հանած ձայնը). ծամ-լամ-որ-ել (ծամծմել).

7) Միավանկ արմատի կրկնութիւն՝ սկզբի բաղաձայնի անկումով.

Դսկ. հոս-ոս-եմ. հեղ-եղ.

Երև. հեք-եք-ամ («լացից յետոյ կցկտուր շունչ քաշել»), փւթ-ուք-ել կամ քուք անել («գլխի միջատները որոնել», Ակն՝ քրքվել). փուջ-ուջ-ել, փուջուջ կամ քրջուջ անել («թռչունների ստերով աղբ, հող քրքրելն ու միջից ունտեր որոնելը»).

8) Անփոփոխ կրկնութիւն միավանկ արմատի.

Դսկ. աղս-աղս-ուկ. խոր-խոր-աս. բաւթափեմ (= *բափ-բափ-եմ). շաւ-շափեմ (* = շափ-շափ-եմ). կակածիմ (= *կած-կած-իմ), ևն.

Երև. սլ-սլ-ալ (սողոսկել). ծլ-ծլ-ալ. ծլփ-ծլփ-ացնել. փս-փս-ացնել. խլթ-խլթ-ալ. պլթ-պլթ-ալ.

9) Ամբողջական կրկնութիւն բառակերջի ուն ռ-ի փոխուելով.

Դսկ. բար-բառ. գր-գլո. քր-քո-եմ. մր-մո-եմ (հակ մո-մո-եմ).

Երև. ֆր-ֆո-ամ. հր-հո-ամ.

Ծան. Ինչպէս տեսնուում է, այս շարքին պատկանող օրինակները, թէ դասականում թէ Երև. բարբառում բնաձայն բառեր են. բացառութիւն կարող է համարուել բարբառ բառը, որի արմատը, ըստ պ. Աճառեանի (Հանդ. Ամս. 1899 էջ՝ 232) *բարբ պէտք է լինի, որով և այս կրկնութիւնը պէտք է պատկանի ոչ թէ այս շարքին, ինչպէս արտաքուստ ըստ ամենայնի յարմարում է, այլ մի ուրիշ շարքի, ուր կրկնութիւնը տեղի է ունենում արմատի վերջին բաղաձայնի կամ բաղաձայնների անկումով. օր. սա-սասկ (= *սասկ-սասկ). փո-փոխ-եմ (= *փոխ-փոխ-եմ). ըստ այսմ և բար-բառ (= *բարբ-բարբ). բայց այս դէպքում կարելի է հարցնել. անրդեօք սոյն բառի մէջ վերջին ուն ամփոփումն է մի սկզբնական կրկնակ ռ-ի թէ՞ այլ ծագումն ունի, որ մեզ անծանօթ է:

Վերոյիշեալ շարքերից 2), 3), 4), 6), 7) շարքերում կրկնաւորների առաջին տարրերն են, որ ներկայացնում են բառի սկզբնական պարզ վիճակը. դասականում դրանք բոլորն էլ միավանկ են բացի սպառ-ից (3-րդ շարք), որ սկսում է մի կիսավանկով, իսկ բարբառայինների մէջ կան մէկից աւելի երկավանկեր էլ: Այս վերջիններից ուշադրաւ են փալաս-փուլուս, աղփաւ-ուլփուս, երես-մերես և ուրիշ այս կարգի ձևեր, որոնց ճիշտ համապատասխանները դասականում բացակայում են:

Բացի սոյն արտաքին ձևական զանազանութիւնից, բարբառային կրկնաւորները իմաստով էլ ըստ ամենայնի համերաշխ չեն դասականների հետ: Համեմատենք, օրինակի համար, յարմար, շոգմոգ, սարսուռ, ահամարն ձևերը նման կրկնաւորների հետ բարբառային շարքերից—հաց-մաց, հագալ-

մազալ, աղբաս-ուղբուտ. ևն. առաջիններն ըստ իմաստի վաղուց արդէն կորցրել են իրանց կրկնաւորի նկարագիրը և կիրարկուած են իբրև արտայայտիչ պարզ դադափարների. նրանցից ամէն մէկը կարող է մի բառով թարգմանուել որ և է լեզուի. մինչդեռ բարբառային ձևերը հաւաքական իմաստ ունին, ներկայացնում են բարդ դադափարներ, ինչպէս—հաց-մաց=հաց ու հացից անբաժան ուրիշ սննդեղէն. հազալ-մազալ=հազալ և հազալու մօտ ուրիշ տկարութիւններ, ևն.

Վերջացնելուց առաջ սոյն համառօտ նկարագրութիւնս Երևանեան կրկնաւորների մասին, կը կամենայի սոյն բարբառի ընձեռած մի օրինակով լուսաբանել մի հին կրկնաւորի կազմութիւնը: Բաւական հին է կապկանձել կրկնաւոր բայը, որ միևնոյն ժամանակ և մի բնաձայն բառ է. Նարեկ. «կապկանձողական»: Աբովեանի հատորը մեզ տալիս է կօնձ-կօնձ-ալ կըրկնաւորը, որ, ըստ իս, միևնոյն բառն է անձ ձայնախմբի օնձ-ի փոփոխմամբ, ոչ նուազ նոյնանալով նաև իմաստով:

Մեծազ վարդապետ Մախաբեանց.

1913 Ս. Էջմիածին.